Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 011303303, 010461841
info@samc.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1982

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ 1/04-576 23.10.2023թ.

«Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

հ.ՍԱԲԿ-ԲՄԱՊՁԲ-23/2-4 պայմանագրի միակողմանի մասնակի լուծման մասին

Հարգելի՛ պարոն Վարդումյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ում /այսուհետ՝ բժշկական կենտրոն/ 2023 թվականի կարիքների համար մատակարարված ապրանքների՝ պայմանագրերով նախատեսված տեխնիկական բնութագրերի համապատասխանության ընթացիկ ստուգման արդյունքում պարզվել է, որ բժշկական կենտրոնի և «Ս.Ա.Վ.ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 27.01.2023թ. կնքված հ. ՍԱԲԿ-ԲՄԱՊՁԲ-23/2-4 պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 105-րդ չափաբաժնով մատակարարված մեկանգամյա օգտագործման բժշկական խալաթը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրին: Մասնավորապես՝ Պայմանագրի Հավելված-1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 105-րդ չափաբաժնով ձեռք բերված մեկանգամյա օգտագործման բժշկական խալաթի /այսուհետ՝ խալաթ/ տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ խալաթը նախատեսվում է մեկանգամյա օգտագործման համար, չախտահանված, պատրաստված ոչ գործվածքային նյութից, չափը՝ մեծ, գույնը՝ կապուտ (սպիտակ մանժետով), քաշը ՝ 110 գրամ (Կտորի քաշը՝ 38 գրամ/մ2) ձեռքերի վրա մանժետներով, կապիչը՝ գոտկատեղում, չափը՝ L կամ XL, ըստ պատվիրատուի պահանջի: Գույնը՝ ըստ

պատվիրատուի պահանջի: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ը:

Սակայն մատակարարված խալաթի՝ ընտրանքային կարգով վեցրած նմուշի ստուգման արդյունքում պարզվել է, որ խալաթի ընդհանուր քաշը կազմում է ընդամենը 39 գրամ /ինչը արդեն իսկ նշանակում է, որ խալաթը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով նախատեսված խտությանը և գործվածքին/, թևերի դաստակների մասում բացակայում են մանժետները, գոտկատեղի կապիչները կապելու ընթացքում հաճախ պոկվում են, շուտ և հեշտությամբ խալաթը պատռվում է, գույնը սպիտակ է, ինչի մասին բազմաթիվ բանավոր բողոքներ են ներկայացվում այն օգտագործող բաժանմունքերի կողմից: Հաճախ կարիք է լինում 2-րդ խալաթի օգտագործման՝ առաջինի՝ դեռ չօգտագործված լինելու դեպքում էլ վնասվելու արդյունքում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 10.10.2023թ N 4/04-555 Ձեզ ուղարկված գրությամբ սահմանված ժամկետում առաջարկված նմուշները ևս անցել են փորձաքննություն և պատասխանատու ստորաբաժանման կողմից նույնպես գնահատվել են անհամապատասխան պայմանագրում ներկայացված տեխնիկական բնութագրին:

Հաշվի առնելով վերոգրյալը ՝ տեղեկացնում ենք, որ բժշկական կենտրոնը 105-րդ չափաբաժնով ՝ մեկանգամյա օգտագործման բժշկական խալաթի մասով, միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ , որ «Գնումների մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ)

պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը: Իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 31-րդ կետի 17-րդ ենթակետի «դ» կետի համաձայն՝ կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

Հետևաբար, եթե պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում սահմանված կարգով կատարեք որակավորման պայմանագրի ապահովումների վճարումները, ապա Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով վերոգրայլը՝ տեղեկացնում եմ , որ պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման գումարը կազմում է 129600 /մեկ հարյուր քսանինը հազար վեց հարյուր/, իսկ որակավորման ապահովման գումարը՝ 194400 /մեկ հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր/:

Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Պատվիրատուի 1570053952390100 հաշվեհամարին և վճարման կտրոնները ներկայացնել Պատվիրատուի գնումների բաժին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

/ՏՆՕՐԵՆ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա.Հակաչատրյան
Գնումների բաժին
Հեռ.՝ 010 -461- 740, 011 303-303